



ՀՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ (ԵԱԿՀ)



*Հիմնադրվել և աջակցություն է ստանում Հայ օգնության ֆոնդի
կողմից (ՀՕՖ)*

ՀՕՖ (Հայ օգնության ֆոնդ)

Պատվե՛նք անցյալը, հզորացնե՛նք ներկան, երաշավորե՛նք ապագան



ՀՕՖ-ը ստեղծվեց 1988 թվականի ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո: Երբ առաքելությամբ Հայաստան եկած ՀՕՖ-ի անդամները (որը գլխավորվում էր արքեպիսկոպոս Թորգոմ Մանուգյանի կողմից, ապա Ամերիկայում

գործող հայկական եկեղեցու արևելյան թեմի առաջնորդ Գևորգ Հովնանյանի և նշանավոր նյարդավիրաբույժ, դոկտոր Էդգար Հովսեփյանի կողմից) վերադարձան ԱՄՆ, սկսեցին ջանքերը նպատակաուղղել՝ մոբիլիզացնելով ռեսուրսները Հայաստանի համար: ՀՕՖ-ի սկզբնական ծրագրերը ուղղված էին հրատապ բժշկական աջակցության ցուցաբերմանը, օգնության պարագաների առաքմանը, ինչպես նաև ենթակառուցվածքների վերականգնմանը:

Երկրաշարժից հետո հանդես գալով այս առաքելությամբ՝ ՀՕՖ-ը ապահովում էր երկարաժամկետ և կայուն աջակցություն, մասնավորապես, այն պարագայում, երբ երկիրը նոր էր ստացել անկախությունը ԽՍՀՄ կազմից դուրս գալուց հետո:

«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ. ծրագրեր և ծառայություններ

Երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամը (ԵԱԿՀ), որ հիմնվել է 1999թ., որպես Երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոն Ներքին գործերի նախարարության ենթակայությամբ, և ճանաչվել որպես հիմնադրամ 2008թ., ՀՕՖ-ի լայնամասշտաբ ծրագրերից մեկն է: ԵԱԿՀ-ն Հայաստանում միակ կառույցն է, որ իրականացնում է ճգնաժամի միջատություն և վերականգնում՝ ներառելով համալիր ծառայությունների համակարգ:

ԵԱԿՀ-ն համախմբում է ջանքերը՝ բարելավելու երեխաների պաշտպանության համակարգը՝ միավորելով կարիքի մեջ գտնվող երեխաների համար հասանելի ռեսուրսները և լոբիստական աշխատանքներ իրականացնելով: Այս համատեքստում, ԵԱԿՀ-ն տարիներ շարունակ զարգացնում է երեխաների և ընտանիքների հետ աշխատող մասնագետների կարողությունները, լոբիստական աշխատանքների միջոցով բարձրացնում երեխաների իրավունքների և ընտանիքների պաշտպանության վերաբերյալ հանրային իրազեկվածությունը, մշակում սոցիալական տեխնոլոգիաներ, որոնք նպատակ ունեն բացահայտել ռիսկի մեջ գտնվող երեխաներին և ընտանիքներին, մատուցում վերականգնողական ծառայություններ՝ արձագանքելու առկա կարիքներին և ընդլայնում ու ամրապնդում երեխայի խնամքի ընտանեկեն համակարգը: ԵԱԿՀ-ն իրականացում է ներկենտրոնային և արտակենտրոնային հետևյալ ծառայություններն ու ծրագրերը.

ՆԵՐԿԵՆՏՐՈՆԱՅԻՆ.

- Ճգնաժամի միջամտության ծրագիր
- Կարճաժամկետ ապաստանման ծառայություն
- Երեխաների պաշտպանության թեժ-գիծ ծառայություն
- Խնամատար ընտանիքի ծրագիր

ԱՐՏԱԿԵՆՏՐՈՆԱՅԻՆ.

- Մանկական աղքատության կանխարգելումը Արարատի մարզումե ծրագիր
- Մոլորության կանխարգելումը Տավուշի մարզում. ընտանիքների կայունացման բաղադրիչն է ծրագիր
- Երեխաների պաշտպանությամբ զբաղվող մասնագետների կարողությունների զարգացում և ուժեղացում
- Աջակցություն երեխաների պաշտպանության համակարգի կայունացմանը և հզորացմանը

Ճգնաժամի միջամտության ծրագիր



ԵԱԿՀ-ն տրամադրում է 24 ժամյա խնամք և անհատական աշխատանք մինչև 6 ամիս տևողությամբ՝ ապահովելով նաև հետագա շարունակական վերահսկողությունը՝ 3-18 տարեկան լրված, բռնության ենթարկված, կրթությունից դուրս մնացած, օրենքի հետ և այլ խնդիրներ ունեցող երեխաների համար:

Այս ծրագիրը ստեղծում է ջերմ միջավայր և ցուցաբերում է միջամտության հովիստիկ մոտեցում հմուտ մասնագիտական թիմի շնորհիվ:

Յուրաքանչյուր երեխա ստանում է հետևյալ ծառայությունները.

- *Սոցիալական աշխատանք.* ուսումնասիրություն, գնահատում և խորհրդատվություն երեխայի և ընտանիքի համար, ինչպես նաև համագործակցություն երեխայի պաշտպանության ոլորտի համապատասխան կառույցների հետ
- *Բժշկական աջակցություն.* բժշկական գնահատում ինչպես Կենտրոնում, այնպես էլ մասնագիտացված բժշկական կենտրոններում, սննդի և հիգիենայի շարունակական վերահսկողություն
- *Հոգեբանական թերապիա.* գնահատում և խորհրդատվություն երեխայի և ընտանիքի համար
- *Արտթերապիա.* արտթերապևտիկ հանդիպումներ, որոնք զարգացնում են ինքնաարտահայտումը, ստեղծագործական մտածելակերպը և խթանում տրավմայի ենթարկված երեխաների ապաքինումը
- *Սոցիալմանկավարժական աջակցություն.* անհատական և խմբային հանդիպումներ, որոնք զարգացնում են վարքային և ճանաչողական հմտությունները, միջանձնային շփումները և ինտելեկտուալ կարողությունները
- *Ոստիկանության աջակցություն.* 24 ժամյա իրավական և շտապ արձագանքի ծառայություններ

Ճգնաժամի միջամտություն ծառայության միջոցով տարեկան սպասարկվում է շուրջ 400 երեխա:



Երեխայի պաշտպանության «Թեժ-գիծ» ծառայություն

ԵԱԿՀ-ն հիմնել է անվճար հեռախոսային ծառայություն, որը 24 ժամ հասանելի է պաշտպանության և շտապ խնամքի կարիք ունեցող երեխաներին: Ծառայությունն արձագանքում է նաև հրատապ կարիքներին, բացահայտում է ռիսկի մեջ գտնվող երեխաներին և ընտանիքներին և աջակցում է գտնել միջամտության ամենահամապատասխան մեթոդը:

Հեռախոսային խորհրդատվությունից բացի, կարիքից ելնելով, Թեժ-գիծն ապահովում է լրացուցիչ ծառայությունների մատուցում.

- հումանիտար աջակցություն՝ սննդի և հագուստի տրամադրում
- լրացուցիչ հոգեբանական թերապիա
- բժշկական խորհրդատվություն և աջակցություն
- ճգնաժամի հաղթահարում
- Կարճաժամկետ ապաստանում
- ուղղորդում այլ կառույցների՝ հետագա աջակցության նպատակով

Յուրաքանչյուր տարի ավելի քան 200 հեռախոսազանգ է ստացվում Թեժ գիծ ծառայությամբ:

Դժվար իրավիճակներում հայտնված յուրաքանչյուր երեխա կամ չափահաս անձ կարող է զանգահարել 0800 61 111 կամ 010 24 15 80 և ստանալ համապատասխան ծառայություն:



0800 61 111

Խնամատարության ծրագիր

...երեխաների լավագույն շահին ծառայելով՝ մենք ծառայում ենք մարդկության լավագույն շահին...

2005թ.-ին, ՀՕՖ-ը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ, ՀՀ Կառավարության հետ համատեղ, սկսեց իրականացնել խնամատարության ծրագիր՝ ի պատասխան լքված և գիշերօթիկ դպրոցներում և մանկատներում խնամվող երեխաների թվի աճին: Ծրագրի շրջանակներում շուրջ 30 երեխա տեղավորվեց խնամատար ընտանիքներում:

Այսօր ԵԱԿՀ-ն շարունակում է իրագեկումները երեխաների պաշտպանությամբ զբաղվող մասնագետների, ինչպես նաև պոտենցիալ խնամատար ծնողների շրջանում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տեղավորելու խնամատար ընտանիքներում (*եթե երեխայի հարազատ ընտանիքը բացակայում է կամ սեփական ընտանիքի հետ երեխայի վերամիավորումը հնարավոր չէ կամ չի բխում երեխայի լավագույն շահից*):

Ծրագրի շրջանակներում ԵԱԿՀ-ն.

- իրականացնելու է պոտենցիալ խնամատար ծնողների գրանցումը և գնահատումը
- կազմակերպելու է վերապատրաստումներ պոտենցիալ խնամատար ծնողների համար
- իրականացնելու է խնամատարության համար թեկնածու երեխաների խորին գնահատում
- իրականացնելու է պոտենցիալ խնամատար ծնողների և երեխաների համադրման գործընթացը
- կազմակերպելու է երեխաների և նրանք ընտանիքների նախապատրաստումը խնամատարության գործընթացին
- կազմակերպելու է երեխաների տեղավորման գործընթացը
- ապահովելու է մասնագիտական դրական ուղեկցումը և մոնիթորինգը

Ծրագիրը (*«Խոցելի երեխաների սոցիալական ներառում»*) ֆինանսավորվում է ԱՄՆ ՄԶԳ կողմից և համաֆինանսավորվում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից: Ծրագրի նպատակն է ներկայումս երեխայի խնամքի համակարգում ընթացող բարեփոխումների շրջանակներում աջակցել ՀՀ կառավարությանը երեխայի ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքն ու համայնքահեն սոցիալական և կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու գործում: ԵԱԿՀ գործընկերն է «Սեյվ դը չիլդրեն» հայաստանյան ներկայացուցչությունը:

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄ

Նպատակն է կանխարգելել և կրճատել մանկական աղքատությունը ընտանիքների կայունացման միջոցով: Ծառայությունն աջակցում է երեխաներին և նրանց ընտանիքներին՝ մոբիլիզացնելով տեղական մարմինների, համապատասխան պետական և ոչ պետական կազմակերպությունների ռեսուրսները:

Ընտանիքներին տրամադրվում են հետևյալ ծառայությունները՝

- ծնողավարական հմտությունների զարգացում
- մասնագիտական ուսուցում
- իրավաբանական և սոցիալիզացիոնական խորհրդատվական ծառայություններ
- գյուղատնտեսական և հողագործական ռեսուրսներ, ներառյալ՝ անասնաբուծական
- բժշկական գնահատում
- հիմնական ենթակառուցվածքների տրամադրում (օրինակ՝ սանհանգույցի կառուցում և բնակարանային պայմանների բարելավում և վերականգնում)

Ամեն տարի մոտավորապես 400 շահառու-ընտանիք է ներառվում վերոնշյալ ծրագրերում: Արարատի մարզում մանկական աղքատության կանխարգելմանն ուղղված ծրագիրը ֆինանսավորվում է Պիտեր Մարկիայան ընտանիքի կողմից, իսկ «Աղքատության կանխարգելումը Տավուշի մարզում» ծրագիրը՝ Էդուարդ և Ժանետ Մարդիգյանների կողմից:



Երեխաների պաշտպանությամբ զբաղվող մասնագետների կարողությունների զարգացում



Ամեն տարի երեխաների պաշտպանությամբ զբաղվող մասնագետներ մասնակցում ԵԱԿՀ-ի կողմից իրականացվող սեմինարներին, վերապատրաստումներին, համաժողովներին և այլ մասնագիտական միջոցառումներին: Այս վերապատրաստումներն ընդգրկում են մոդուլներ, որոնք հարմարեցված են՝ արձագանքելու շահառու-

ների թիրախ խմբի յուրահատուկ կարիքներին:

2016թ. ընթացքում շուրջ 200 մասնագետ մասնակցել է ԵԱԿՀ կողմից կազմակերպված վերապատրաստումներին՝ «Սոցիալական դեպքի վարում» և «Խնամատարություն» թեմաներով: Վերապատրաստումներն իրականացվել են «Խոցելի երեխաների սոցիալական ներառում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է ԱՄՆ ՄԶԳ կողմից և համաֆինանսավորվում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից:

Աջակցություն երեխաների պաշտպանության համակարգի կայունացմանը և հզորացմանը

2005թ. ԵԱԿՀ-ն հիմնեց Երեխաների պաշտպանության ցանցը, որն այսօր համախմբում է ոլորտում ակտիվ 40 կազմակերպության: Ցանցը խթանում է լավագույն փորձի փոխանակումը և միահամուռ ջանքերով ադվոկացիան, որը նպատակ ունի բարձրացնել կարիքի մեջ գտնվող ընտանիքներին տրամադրվող ծառայությունների որակը և առաջարկել երեխաների պաշտպանությունը պետության մակարդակում կարգավորող նոր մեխանիզմներ:

Այս գործողությունները իրականանում են հետևյալ քայլերի շնորհիվ.

- կոնֆերանսներ և սեմինարներ
- կլոր-սեղան քննարկումներ
- ուղղորդման մեխանիզմների զարգացում
- իրազեկման հանդիպումներ
- լոբիստական աշխատանքներ

ԵԱԿՀ-ն կազմակերպում է խորհրդարանական լսումներ, մամուլի ասուլիսներ, կազմում է հաշվետվություններ ՀՀ-ի և ԵՄ-ի համար՝ վեր հանելով այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ երեխաների տեղավորումը հաստատություններում, երեխաների խնամքի ընտանեկեն այլընտրանքների բացակայությունը և համայնքապետական ծառայությունների զարգացումը, ներառյալ՝ սոցիալական տները:

Հենվելով ԵԱԿՀ-ի Հայաստանում Երեխաների պաշտպանության օրենսդրության և գործընթացային բացերի տարեկան վերլուծությունների վրա՝ մշակվում և կառավարությանն են ներկայացվում համապատասխան առաջարկներ, նպատակ ունենալով հիմնել երեխաների և ընտանիքների սոցիալական պաշտպանության վստահելի, երկարաժամկետ քաղաքականություն:

Համագործակցության հրավեր

ԵԱԿՀ-ն ողջունում է բոլոր համախոհներին, ովքեր կիսում են երեխաներին աջակցելու կարևոր առաքելությունը:

Այս առիթով 2006թ. Կենտրոնը հիմնեց «Բարեկամների խորհուրդ» ոչ ֆորմալ կառույցը, որը համախմբում է երեխաների խնդրով մտահոգ անհատների և կազմակերպությունների, ովքեր իրենց հերթին հանդես են գալիս՝ որպես Կենտրոնի «ղեսպաններ»: Բարեկամների խորհուրդը բարձրացնում է երեխաների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության մակարդակը Հայաստանում ԶԼՄ-ների, բարեգործական միջոցառումների և ԵԱԿՀ-ի նախաձեռնությունների լոբիստական աշխատանքների միջոցով:

Բացի Բարեկամների խորհրդի անդամ դառնալու հնարավորությունից, Դուք կարող եք Ձեր աջակցությունը տրամադրել՝ ներգրավելով հետևյալում.

- Մենթորություն մեղիա լաբորատորիայում՝ լուսանկարում, տեսանյութերի նկարահանում և ընդհանուր համակարգչային գրագիտություն
- Աջակցություն արտթերապիային, որն իր մեջ ներառում է գեղարվեստ, պար, դրամա և երաժշտություն
- աջակցություն սպորտային և ֆիզիկական կրթությանը
- անգլերեն և այլ լեզուների ուսուցանում
- աջակցություն դասապատրաստման գործընթացում
- աջակցություն մշակութային ոլորտի շուրջ գիտելիքի ձեռքբերման հարցում
- ծրագրերի և գաղափարների շուրջ ադվոկացիա՝ սոցիալական մեղիայի միջոցով
- մասնակցություն ծրագրերի մշակմանը

Երեխաները մեծ հաճույք կստանան՝ հանդիպելով նոր ընկերների ամբողջ աշխարհից: Այցելեք մեզ՝ տեսնելու թե ինչպես Ձեր ներդրումը կարող է դառնալ մեր դժվարին աշխատանքի մի մասը:

Եթե հետաքրքրված եք Ձեր ներդրումն ունենալու, կապվեք մեզ հետ.

Հեռ.՝ (+374 060) 540 150

Ֆաքս՝ (+374 010) 240 121

Ավելի մանրամասն տեղեկությունների համար այցելեք մեր վեբ-կայք՝

www.farusa.org

www.armenianchildren.org

